ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ,ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ,ՏՆՏԵՍԱԿԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք,
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գեղակերտ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 17

19 նոյեմբերի 2024 թվական

Տեղի ունեցավ Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու ֆինանսավարկային, բյուջետային, տնտեսական, գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդական հարցերի մշտական հանձնաժողովի N 05 նիստը: Նիստին ներկա էին հանձնաժողովի անդամներ՝ Լիլիթ Ենգիբարյանը, Աննա Գևորգյանը, Իրինա Սիրունյանը և Հրայր Ասատրյանը:

Հանձնաժողովի նիստի ընթացքում քննարկվեց ՀՀ Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի ֆինասատնտեսագիտական և գնումների բաժնի պետի կողմից ներկայացված «**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի եվ բյուջետային հիմնարկների, համայնքային ոչ առեվտրային կազմակերպությունների աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը եվ պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին**» նախագիծը՝ Խոյ համայնքի 2024 թվականի նոյեմբերի 22-ի ավագանու հերթական նիստում :

Նիստում քննարկվեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի եվ բյուջետային հիմնարկների, համայնքային ոչ առեվտրային կազմակերպությունների աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը եվ պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին հարցը:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու ֆինանսավարկային, բյուջետային, տնտեսական, գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդական հարցերի մշտական հանձնաժողովը տալիս է հետևյալ եզրակացությունը՝

1. Տալ համաձայնություն՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի 2025 թվականի կառուցվածքը՝ համաձայն N 1 հավելվածի:

2.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2025 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:

3.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի բյուջետային հիմնարկների /մանկապարտեզների/ աշխատակիցների 2025 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 3,4,5,6,7 հավելվածների:

5.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի բյուջետային հիմնարկների /«Մշակույթի և սպորտի» կենտրոնի / աշխատակիցների 2025 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 8 հավելվածի:

6.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի բյուջետային հիմնարկների /«Կումունալ սպասարկում և բարեկարգում» հիմնարկ / աշխատակիցների 2025 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 9 հավելվածի:

7. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Խոյի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների 2025 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 10 հավելվածի:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝	ԼԻԼԻԹ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝	ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ՝	ԻՐԻՆԱ ՍԻՐՈՒՆՅԱՆ
	ՀՐԱՅՐ ԱՍԱՏՐՅԱՆ